

2020-2021 ՈՒՍԱՐԻ
ՆԱԽՆԱԿԱՆ ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ
ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՐԿԱՅԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՅԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ - 2020-2021 ՈՒՍԱՐԻ

11 - 12- ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐ

Տևողությունը՝ **120** րոպե:

Գնահատումը կատարվում է **20** միավորանոց համակարգով:

Բոլոր առաջադրանքներն ունեն մեկ ճիշտ պատասխան:

Ճիշտ պատասխանը գնահատվում է 1(մեկ) միավոր:

1. Հայրենական պատերազմին մասնակցում էին՝

ա. 500 հազար հայորդիներ

գ. 600 հազար հայորդիներ

բ. 650 հազար հայորդիներ

դ. 700 հազար հայորդիներ

2. Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Խորհրդային Հանրապետությանը միավորելու համար Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհուրդը որոշում ընդունեց՝

ա. 1988 թ. մայիսի 28-ին

գ. 1991 թ. օգոստոսի 23-ին

բ. 1988 թ. փետրվարի 20-ին

դ. 1989 թ. սեպտեմբերի 21-ին

3. Հայկական քանի՞ դիվիզիա է մասնակցել Հայրենական մեծ պատերազմին (1941-1945թթ).

ա. 4

բ. 5

գ. 6

դ. 7

4. Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Գերմանիայում կազմավորված հայկական լեգիոնի հրամանատարն էր՝

ա. Գարեգին Նժդեհ

բ. Միսակ Մանուշյան

գ. Դրաստամատ Կանայան (Դրո)

դ. Նվեր Սաֆարյանը

5. Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Գերմանիայում կազմավորված հայկական լեգիոնը կազմված էր

ա. 5 գումարտակ և մոտ 8000 զինվորական

բ. 11 գումարտակ և մոտ 18000 զինվորական

գ. 6 վաշտ և մոտ 800 զինվորական

դ. 8 գումարտակ և մոտ 1500 զինվորական

6. 1921 թ. ապրիլի 2-ին, Ձանգեզուրը հռչակվեց անկախ Հանրապետություն՝ <<Լեռնահայաստանի Հանրապետություն>> անվամբ և վարչապետ նշանակվեց՝

ա. Գարեգին Նժդեհը

բ. Սիմոն Վրացյանը

գ. Ռուբեն Տեր-Մինասյանը

դ. Արսեն Շահմազյանը

7. Առաջանշանառումը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

ա. $Q = A_{թ} \times t_q$

բ. $Q = V_{թ} \times T_q,$

գ. $V_{թ} = Q \times t_q$

դ. $Q = V_{թ} \times t_q$

8. Հրետանավորը պայթյունը լսել է բռնկումից 15 վայրկյան հետո: Հեռավորությունը մինչև հարվածի տեղը հավասար կլինի՝

ա. 25 կմ

բ. 15 կմ

գ. 5 կմ

դ. 10 կմ

9. Միջին հասակի մարդու չափերը քանոնով չափելիս ստացվել է 2 մմ: Որքա՞ն է Ձեր կանգնած կետից մինչ տվյալ մարդը եղած հեռավորությունը:

- ա. 430 մ. բ. 500 մ. գ. 425 մ. դ. 340 մ.

10. Հորիզոնում գտնվող տանկի հետ կլոր մատիտը համեմատելիս այն ամբողջությամբ ծածկում է տանկը: Որքա՞ն է կազմում դիտակետից մինչ տանկը եղած հեռավորությունը:

- ա. 250 մ. բ. 200 մ. գ. 320 մ. դ. 340 մ.

11. Մարդու հասակը 1.62 մետր է: Այդ մարդու քայլի երկարությունը կկազմի՞

- ա. 0.77 մ. բ. 08 մ. գ. 1 մ. դ. 072 մ.

12. Նռնակներից որը՞ հարձակողական չէ՝

- ա. Ջ-1 բ. ՌԳԴ-5 գ. Ֆ-1 դ. ՌԳ-42

13. ԱԿ-74 ինքնաձիգի գնդակի սկզբնական արագությունը՝

- ա. 1000 մ/վրկ բ. 900 մ/վրկ գ. 950 մ/վրկ դ. 12000 մ/վրկ

14. Ինչի՞ համար է նախատեսված ԿԱ-74 ավտոմատի փոխադրիչը.

- ա. Չարկանաձգային մեխանիզմը գործարկելու և արգելակելու համար
բ. Փամփուշտը փմփշտանոց մղելը թույլ տալու կամ արգելելու համար
գ. Ավտոմատը ապահովիչի վրա դնելու համար
դ. Ավտոմատը կրակահերթով, մենահատ կրակոցով կրակելու ինչպես նաև ապահովիչ վրա դնելու համար

15. Մագնիսական սլաքի ցույց տված ուղղությունը, որն անցնում է կանգնած կետով կոչվում է՝

- ա. մագնիսական ազիմուտ բ. մագնիսական միջօրեական
գ. մագնիսական հորիզոնական դ. մագնիսական լայնություն

16. Թաքստոցի հետևում գտնվող, գնդակից չխոցվող տարածությունը կոչվում է՝

- ա. պաշտպանված տարածություն բ. խոցելի տարածություն
գ. պատսպարված տարածություն դ. մեռյալ տարածություն

17. Ժամապահը՝

- ա. գինված պահակայինն է, որը կատարում է իրեն հանձնարարված պահակետը պահպանելու և պաշտպանելու մարտական առաջադրանք:
բ. Պահակակետը զենքով հսկողն է:
գ. Չինված պահակայինն է, որը պահպանում և հսկում է պահակակետը:
դ. Չինված պահակայինն է, որը կատարում է պահակակետը պաշտպանելու հանձնարարություն:

18. Երկրորդ աշխարհամարտի ժամանակ Գերմանիայում կազմավորված հայկական լեգիոնն ուներ՝

- ա. 11 գումարտակ՝ մոտ 18 000 զինվորական և իր ուրույն տարբերանշանները
բ. 15 գումարտակ՝ մոտ 20 000 զինվորական և տարբերանշաններ
գ. 10 գումարտակ՝ մոտ 15 000 զինվորական և իր տարբերանշանները
դ. 9 գումարտակ՝ մոտ 10 000 զինվորական

19. Ժնկյան կոնվենցիաները հստակորեն արգելում են՝

ա. հիվանդների, վիրավորների միջև խտրականություն դնելը անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, կրոնական պատկանելիությունից, քաղաքական համոզմունքների տարբերություններից, ինչպես նաև սեփական կամ հակառակորդ կողմին պատկանելու փաստից:

բ. Հիվանդների, վիրավորների միջև տարբերություն դնելը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, կրոնական պատկանելիությունից, բացառությամբ քաղաքական համոզմունքների տարբերություններից:

գ. Հիվանդների, վիրավորների միջև խտրականություն դնելը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, , քաղաքական համոզմունքների տարբերություններից, ինչպես նաև սեփական կամ հակառակորդ կողմին պատկանելու փաստից, բացառությամբ կրոնական պատկանելիությունից:

դ. Հիվանդների, վիրավորների միջև խտրականություն դնելը անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, կրոնական պատկանելիությունից, քաղաքական համոզմունքների տարբերություններից, բացառությամբ հակառակորդ կողմին պատկանելու փաստից:

20.Քիմիական զենքը

ա. զանգվածային խոցման զենք է, որը հիմնված քիմիական և կենսաբանական նյութերի թունավոր հատկությունների վրա:

բ. տեղային խոցման զենք է, որը հիմնված է քիմիական նյութերի թունավոր հատկությունների վրա:

գ. զանգվածային խոցման զենք է՝ հիմնված քիմիական նյութերի թունավոր հատկությունների վրա:

դ. զանգվածային խոցման զենք է՝ հիմնված քիմիական նյութերի տարբեր հատկությունների վրա:

Ուշադրություն: Ճիշտ պատասխանները նշված են **դեղին** գույնով: